

Հարկավոր է հստակեցնել շարժման հիմնակետը

Մարգարյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
sargsyansuren@yandex.ru

EDN: ZWKOBJ

Տեսական ժամանակ է քաղաքն այնպես դրվում է, ցույցեր են, երթեր ու միտինգներ: Հասարակությունը երկփեղկվել է, սակայն զգալի մասն էլ երկրնորանքի առջև են կանգնել: Դուրս գալի վերջո փողոց, թե՛ ոչ: Այն պարզ ճշմարտությունը, որ ամեն ինչ կարգին չէ, որ այսօր անչափելի կորուստներից հետո կրկին վտանգված է մեր ինքնությունն ու պետականության վերջին մնացորդները, ակնհայտ է: Որ անհրաժեշտ է միշտ ու անընդհատ պայքարել այդ արժեքների պաշտպանության համար, դա էլ է անվիճելի: Բայց ինչպե՞ս, ի՞նչ ձևերով ու մեթոդներով, այնքան էլ պարզ չէ: Փողոցում լույսերով ու անլույս երթեր անելով, հայրենասիրական երգեր երգելով ու երբեմն էլ պարելով ու՛ր ենք գնում:

Ստացվել է մի իրավիճակ, երբ հասարակության ավելի գիտակից մասի համար խիստ կարևորվում է փողոց դուրս գալու կամ չգալու անձնական պատասխանատվությունը: Մասնակցել, թե՛ չմասնակցել հանրահավաքին համետյան հարց է դարձել նրանցից շատերի համար, որովհետև ցանկացած հարցի նրանք վերաբերվում են պատասխանատվության ամենալուրջ զգացումով: Հետևաբար ընդդիմությունը նրանց պետք է առարկայական ու հասկանալի ասի, բացատրի ու, ամենակարևորը, համոզի իր պայքարի նպատակները, որպեսզի նրանց տանի իր հետևից: Իսկ ի՞նչ է արվում գործնականում: Չնչին բացառությունները չհաշված՝ ուղղակի հայտարարվում է՝ ով մեզ հետ չի, ազգի դավաճան է, իսկ երբեմն էլ՝ չմիացողներն ուղղակի տհասներ են որակվում և հարցը համարում են փակված: Բա եղա՞վ, բա այդպես որևէ բան համաժողովրդական կլինի՞: Չէ, հաստատ չի լինի: Հետևապես հարկավոր է ոչ թե վիրավորել ու խրտնեցնել հասարակության զգալի հատված-չկողմնորոշվածներին, այլ ականջալուր լինել խելացի, կենսափորձի տեր, պատմությանն ու անցյալի դառը փորձին տեղյակ և բանիմաց մարդկանց ասածներին, ընթերցել նրանց գրածները, սովորել դրանցից...Արդ, քանի դեռ ուշ ու ամեն ինչ կորած չէ, ինչ է անհրաժեշտ անել շարժումը համաժողովրդական դարձնելու համար.

1. հասարակության և տնտեսության բոլոր կարևոր բնագավառների համար ստեղծել աշխատանքային խմբեր, դրանց մեջ ներգրավել կարող և սրտացավ ուժերին,

2. ուսումնասիրել համաշխարհային համամասն իրավիճակների փորձը,

3. հստակ տարբերակել հասարակության մեջ այսօր գոյություն ունեցող խավերը, դասերն ու դասակարգերը և նրանցից յուրաքանչյուրի ձգտումներն ու մտահոգող հիմնախնդիրները: Հասկանալ է պետք, որ Հայաստան երկիրը չի սկսվում ու վերջանում Երևանով, որ մարդկանց զգալի մասն այսօր մերկությունը ծածկելու և քաղցը հագեցնելու խնդիր ունի և այնքան էլ դրական չի վերաբերվում շքեղ մեքենաներով երթերին ու առաջնորդներից շատերի բրենդային հագուկապին:

4. վերջապես հարկավոր է պարզորոշ ընկալել նաև սեռատարիքային առանձնահատկությունները, այդ խմբերի պահանջներն ու ակնկալիքները,

5. առանձնահատուկ վերաբերմունք դրսևորել պատերազմում զոհվածների, խեղվածների ու ընդհանրապես բոլոր մասնակիցներին ու նրանց ընտանիքներին, չմոռանալ երբեք, որ միշտ և բոլոր ժամանակներում հասարակության հենց այդ մասն է եղել և է հիմնական կոպողն ու Հայրենիքի համար նույնիսկ կյանքը չհանայոզը: Հարկավոր է ուշադիր նայել մեր շուրջը և ակներև ու պարզ կդառնա, որ պատերազմների ընթացքում ոչ մի պաշտոնյայի կամ մեծահարուստի երեխայի մատն անգամ չի արյունոտվում, մեզանում նույնպես:

6. ձևակերպել այնպիսի լոզունգ-կոչեր, որոնք սրտամոտ կլինեն հասարակության մեծ մասին և նրանց դուրս կբերեն համագային պայքարի: Ակներև է, որ բացի ինքայականներից և նրա արբանյակ մի քանի հնարովի արտախորհրդարանական խմբերից, բոլոր ուժերը ցանկանում են հեռացնել օրվա իշխանություններին: Բայց քաղաքական վերնախավը չի կարողանում որդեգրել այնպիսի ուղենիշ, որը մեծ զանգվածներ համախմբի և իրականացնի դա: Դատճառն այն է, որ **մեր քաղաքական էլիտան ունի ազգային, բայց չունի սոցիալական մտածողություն: Եվ դա այն դեպքում, երբ ակնհայտ է, որ մեր ժողովրդի 90 տոկոսը սոցիալական խնդիրներ ունի և մտածում է նախ և առաջ դրանք լուծելու մասին:** Իսկ նորություն չէ, որ աղքատ մարդու համար կարևոր է նախ օրվա հացը հայթայթել և մերկությունը ծածկել, հետո այլ բաների մասին մտածել: Դատմությունը մեկ անգամ չէ, որ համոզել է ասվածի ճշմարիտ լինելու հանգամանքը:

1917թ., երբ բոլշևիկներն առաջ քաշեցին «հողը՝ գյուղացուն, գործարանը՝ բանվորին» լոզունգը, ժողովուրդը, որ սոված էր ու տկոթ, թողեց ամեն ինչ, լքեց ռիսերիմ թշնամու՝ գերմանացիների

ճակատը, դեմ գնաց իր իսկ պետությանը և կանգնեց բոլշևիկների կողքին: Եվ ոչ միայն կանգնեց, այլև ավելի քան երկու տարի տևած քաղաքացիական կռիվներում արյուն թափեց հանուն նրանց հաղթանակի:

Նույնը 1933թ. արեցին ֆաշիստները: Նրանք աղքատին պարզ ասացին, որ դու ոչ թե հակասության մեջ մտիր ու պայքարիր քո ազգակից կապիտալիստի դեմ, այլ օգնիր նրան այլ երկրներ նվաճել, թալանել նրանց, և դրա հաշվին բոլորը շատ լավ կապրեն: Այսինքն՝ կրկին սոցիալական հիմնախնդրով, կրկին լավ ապրելու գաղափարն առաջ քաշելով բանվորին ու գյուղացուն կանգնեցրին իրենց կողքին ու գնացին պատերազմի: Ասել է, թե նացիոնալ-սոցիալիզմն այլ ժողովուրդներից բարձր լինելու թեզերը նույն սոցիալական նպատակն էին հետապնդում, բայց ավելի «քաղաքակիրթ» մակարդակում:

Հեռու չգնանք. Արցախյան շարժումից ավելի 1988-ին այդպես համախմբեց մեր ժողովրդին աղքատ ԽՍՀՄ-ից դուրս գալու և Արևմուտքի պես հարուստ ապրելու գաղափարը: Քանի որ այդ տարիներին արդեն զգալի թվով մարդիկ գնացել էին, տեսել կամ ՉԼՄ-ներից տեղեկացել էին, թե որքան լավ են ապրում այնտեղ: Իշխում էր այն թեզը, թե սոցիալիզմից կապիտալիզմի անցնելով կյանքի պայմանները կլավանան:

2018-ի թավշյան էլ նույն կերպ իրականացավ: Գյումրիից սկսված քայլարշավի ընթացքում յուրաքանչյուր կիրճերի հետ խոստումներն ավելի շուտ էին դառնում: Հիմնական գաղափարն այն էր, որ հարուստների կուտակած միլիոնները կկլվեն ու կտրվեն ժողովրդին, և բոլորը կապրեն հարուստ ու երջանիկ:

Այս օրերին էլ խելացի շատ ելույթներ են հնչում (օրինակ՝ վերջերս Հրանտ Բագրատյանինը), գործնական առաջարկներ, բայց, որ ամենակարևորն է իմ կարծիքով, սոցիալական գաղափարը դրանցում կամ բացակայում է, կամ թույլ, աղավաղված ու այլ թեզերում տարալուծված տեսքով է առաջ քաշվում: Այնինչ, ինչպես մի առիթով ասել եմ, դա հստակ ու շատ պարզ պիտի լինի, որովհետև **մարդկանց փողոց հանելու իրական միջոցը սոցիալական գաղափարն է:** Չկա, քանի որ մերօրյա էլիտան ուղղակի չգիտի վատ ապրելն ինչ է ու չի կարողանում աղքատի նման, նրան սրտամոտ մտածել և նրան հոգեհարազատ թեզեր առաջ քաշել և նրանց փողոց դուրս բերել: Աղքատը մոտավորապես մտածում է այսպես. իշխանությունները վատն են, մեծ դժբախտություններ բերեցին, բայց որ գնան, դրանից ի՞նչ օգուտ կլինի իրեն, ո՞րքանով կթեթևանա իր վիճակը և արդյո՞ք կթեթևանա, արդյո՞ք ջրից ջրհեղեղի մեջ չի հայտնվի: Այսինքն՝ այսօր փողոց են դուրս եկել ու այդ խմորումները փորձում են ղեկավարել մարդիկ, որոնք հիմնականում կուշտ են, գիտեն հայրենիք ու արժանապատվություն գաղափարների ինչ լինելը, բայց աղքատի հոգեբանությանն այնքան էլ տեղյակ չեն: Ստացվել է մի վիճակ, երբ կուշտը սովածին իրոք չի հասկանում: **Այստեղից էլ սկսվում ու վերջանում է շարժման ղեկավարության և զանգվածների խզվածության ու փողոց դուրս չգալու հիմնական պատճառը:** Եվ դա այն ղեկքում, երբ օրվա իշխանությունների ու նրա առաջնորդի նման այսքան մերժված կերպար չենք ունեցել, որ նրանք արդեն նախկին հենարանը չունեն հասարակության մեջ: Բոլորին նրանց իշխանությունն այնքան էլ ժողովրդական չի և հարմար է միայն իրենց ու իրենց մտերիմ-բարեկամներին:

7. Հարկավոր է վերջապես այս ամենին գուզընթաց **պայքարում ներառել Սփյուռքին ու համազգային միասնական գաղափարախոսություն մշակել**, որն այդպես էլ մեզ դեռ չի հաջողվել: Քանի որ նախ, աշխարհի հզորները «քաղաքակրթութեան իրաւունքները ռոնակոխ ըրին», հետո էլ՝ «Շուարումէ շուարում քալեցինք: Անստուգութիւն, անհեռատեսութիւն, ներքին պառակտումներ և խուճապ պատեցին մեզ, և մեր ազգային նաւը, առանց ղեկի ծովու ալեկոծեալ ալիքներէն տարուեցաւ հոս ու հոն»: Սակայն վստահ եմ, որ «ցիրուցան Հայութիւնը պիտի մի օր գայ բոլորուիլ ներկայ ազատ Հայաստանի շուրջը և պիտի պատսպարուի ազատութեան ծառին թևերուն ներքև»: Կասկածից դուրս է, որ Հայրենիքի սատարմանն ուղղված ազգային տեսլականը, խոսքերն ու գործադրած ջանքերը, արևմուտքի երկրների հետ կապած հույսերն ու հուսախաբությունները, Հայաստանի ռազմավարական կողմնորոշման վերաբերյալ իրատեսական դատողություններն ու գնահատանքները այսօր էլ խիստ արդիական են, քանի որ հիմնված են պատմաքաղաքական փորձառության, գիտակցված ազգային նպատակի և գործնական հայրենասիրության վրա:

Այս առիթով ցանկանում եմ հիշեցնել, որ համազգային համախմբման այդպիսի գործնական փորձ նույնիսկ ԽՍՀՄ-ում է եղել: Կոմկուսի կոնտկոմի քաղքյուրոյի որոշումով դեռևս 1962 թ. ստեղծվեց «Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն»: Սակայն այդ եզակի և ուրույն կառույցը ոչնչացվեց Տեր-Պետրոսյանի նախագահության առաջին իսկ օրերին: Այդ քայլը «մահացու» հարված հասցրեց սփյուռքահայ կառույցներին: Սփյուռքում էլ ավանդական կուսակցություններն ու նրանց ղեկավարությամբ գործող «Հայ դատ» և «Հայկական համագումար» կամակերպությունները, որոնք ազդեցիկ դիրքեր ունեին ԱՄՆ-ում (տարիներ շարունակ երրորդ տեղն էին զբաղեցնում), Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, «Էրոզիայի» ենթարկվեցին և հստակ էլ չէ, թե

այժմ որերորդ տեղում են: Որովհետև այդպես էլ չգիտակցվեց, որ մեր ժողովրդին նպատակի հստակ ձևակերպում, այսինքն՝ համազգային գաղափարաբանություն է անհրաժեշտ և այն գիտակցումը, որ երկրի կարևորագույն գործառնությունը համազգային ներուժի արդյունավետ ու նպատակային կառավարումն է: Այնինչ, ներկա վարչախումբն ավելի հեռուն գնաց և ընդհանրապես վերացրեց Մփյուռքի նրարությունը:

Այսօր նաև օդի նման անհրաժեշտ է գիտակցել, որ պատերազմի օրերին ընգծված հավասարության նշանով ստեպ-ստեպ հայտարարություններից բացի ոչինչ չձեռնարկած Արևմուտքն աննախադեպ աշխուժացել է, քանի որ նրան հարկավոր է մեր տարածաշրջանում երբեմն-երբեմն ժայթկող տաք կետը սառեցնել և ավելի հիմնավոր զբաղվել Ռուսաստանի ու նոր աշխահակարգի ձևավորման հարցերով: Իսկ դրանից օգտվելով Թուրքիան Արևմուտքի զանազան կենտրոնների հետ բանակցում և չքմեղանալով հայտարարում է, թե ինչ անեն Հայաստանի խեղճ իշխանությունները (կարծես ինքը նրանց փաստաբանն է), նրանց ներսից արմատականներն են ճնշում, դրսից՝ Մփյուռքը և թույլ չեն տալիս խաղաղություն հաստատել տարածաշրջանում: Ով-ով, մենք լավ գիտենք ինչի մասին է խոսքը...

Պատերազմը նաև ցույց տվեց, որ ՀՀ-ն ու նրա խնդիրները ոչ մի արժեք չունեն Արևմուտքի համար և 44-օրյա ընթացքում ամենուր զրո լռություն էր: Իսկ սա Թուրքիայի համար պատմական շանս է օրվա վարչակարգը պահելու, Ռուսաստանին ավելի նյարդայնացնելու և Հայաստանի հետ անելու այն, ինչն արեց Արցախի հետ ու Ռուսաստանը չկարողանա նույնիսկ միջամտել: Այնպես որ, այս պայմաններում իշխանությունների մնալն իսկապես սպառնալիք է մեր ազգային անվտանգությանը: Կարծում եմ Ռուսաստանին էլ ձեռնտու չէ, որ Հայաստանում ղեկավար մնան «խաղեր տվող» հայկական նավալինները, միայն թե Ուկրաինայում երկարաձգվող հատուկ գործողությունը հնարավորություն չի տալիս մեզանով զբաղվելու, ուղղակի «ему не до нас»: Այս պայմաններում վտանգն այն է մեզ համար, որ մենք կկորցնենք մեր լիակատար սուվերենությունը, քանի որ եթե խնդիր ունեն և ինքդ չես լուծում այն, այլ ուրիշը, ապա նա էլ բնականաբար դառնում է թելադրողը: Ամեն ինչ կախված է նրանից, թե մեր քաղաքական ղեկավարությունը և ընդդիմությունն ինչպես իրենց կդրսևորեն ապագայում: Պարզապես հարկավոր է ամեն ինչ անել և թույլ չտալ, որ մենք Ուկրաինայի նման հայտնվենք ռուսական և ամերիկյան շահերի բախման կիզակետում և գործիք դառնանք նրանց ձեռքին: Ամենակարևորն ու անհրաժեշտն այս պահին ճկուն, պրագմատիկ և համարձակ քաղաքականություն վարելն է, հզորների միջև առկա հակասությունից խլամփտ օգտվելն ու երկրի համար առավել շահած դիրք ապահովելը:

29.05.2022